

ԱՄԲԵՐԴ ԶԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԶԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԳՈՐԾՈՒԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«18» ՀՈՒՆՎԱՐԻ 2018թ.

գ. Ամբերդ

Չարգելի Ամբերդ Չամայնքի բնակիչներ այսօրվա համայնքի ժողովում ես ձեզ կներկայացնեմ 2017 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների մասին և ասեմ որ, այս ժողովին ներկա է նաև Արմավիրի մարզպետարանի աշխատակից Վարազդատ Մկրտչյանը: Կներկայացնեմ նաև բյուջեի կատարողականի մասին տեղեկություններ և կխոսեմ համայնքում առկա հիմնախնդիրների մասին: Վերջում կլինի հարց ու պատասխան : Այժմ ես հերթով կզեկուցեմ թե, որ բնագավառում ինչ է կատարվել և ինչ պետք է կատարվի:

1. Ֆինանսների բնագավառ

Չամայնքում 2017 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում հավաքագրվել է ընդհանենը 39152.3 հազար դրամ գումար , որը կազմում է 2017 թվականի կատարողականի 100.5 % -ը որից

ա/ Գյուղնշանակության հողի հարկ հավաքագրվել է 7994.6 հազար դրամ

բ/ Գույքահարկ հավաքագրվել է 2321.4 հազար դրամ

գ/ Վարձակալական հողի հարկ հավաքագրվել է 175.8 հազար դրամ

դ/ Պետության կողմից դոտացյա 27650.5 հազար դրամ

ե/ Տեղական տուրք 80.6 հազար դրամ

զ/ Այլ ոչ հարկային գումարներ 282.2 հազար դրամ

է/ Տեղական վճար 34.6 հազար դրամ

ը/ Աղբահանություն 612.7 հազար դրամ

Չամայնքում սեփական եկամուտների % -ը կազմում է 101.9 %: Չամայնքում կատարված է համայնքի բյուջեի հաշվին հետևյալ աշխատանքները : Չամայնքի անապահով ընտանիքներին տրամադրվել է սոցիալական օգնություններ: Ապրիլի 24-ին կազմակերպվել է միջոցառում նվիրված հայոց մեծ եղեռնի և

մայիսի 9-ին կազմակերպվել է միջոցառում հայրենական մեծ պատերազմի հաղթանակի և Արցախյան պատերազմի հաղթանակի օրվա առթիվ: Համայնքի երեխաների համար կազմակերպվել է ամանորի միջոցառում:

1.Հասարակական կարգի պահպանում

Ես որպես համայնքի ղեկավար շատ կարևոր եմ համարում հասարակական կարգի պահպանությունը : Չամայնքի բնակիչներից շնորհակալություն եմ հայտնում հասարակական կարգը պահպանելու համար: Համայնքում չկան այնպիսի բնակիչներ որոնք խանգարեն բնականոն կյանքը ավելին բնակիչները իրենք են ամեն ինչ անում որպիսի համայնքում ոչ մի արտառոց բան չկատարվի:

2. Պաշտպանության բնագավառում

Իմ առաջին նախապայմանն այն է որ, համայնքում իշխի հայրենասիրությունը: Վերջապես բոլորս ապրում ենք Հայաստան աշխարհում , որը մեր բոլորիս տունն է: Հայրենիքի պաշտպանության համար սիրով պետք է կատարենք մեր պարտականությունները, այլապես ազգը, որ գոյատևել է դարեր շարունակ կկործանենք, որի իրավունքը մենք չունենք : Մեր պապերից փոխանցված երկիրը մենք պետք է զարգացնենք: Բանակը պետք է ուժեղացնենք, պաշտպանության հիմնաքարը ամուր դնենք և հետո փոխանցենք մեր սերունդներին: Այսօր համայնքում կան զորակոչճից խուսափող թվով 10 զինակոչիկ, որոնք գտնվում են արտ. երկրներում, մի մասը արդեն իսկ այնտեղի քաղաքացիներ են դարձել, իսկ այժմյան սերունդը բանակից չի խուսափում: Հարկավոր է բոլորս միասին պայքարենք և տվյալ երիտասարդներին հետ բերենք և ուղարկենք ծառայության: Մեր համայնքի համար ուղակի ամոթ է զորակոչից խուսափելը:

3. Քաղաքաշինության բնագավառ

Հարգելի համայնքի բնակիչներ, քաղաքաշինության բնագավառում ես կասեի, մենք շատ թերացումներ ունենք: Համայնքում կան տներ, որոնց սեսմակայունությունը ապահովված չէ, մարդը տունը կառուցում է առանց հաշվի առնելու նախագծող կազմակերպության կարծիքը: Կան շենքեր որոնց մի մասը չեն դիմանա 3-ից 4 բալանոց երկրաշարժից: Եվ ես որպես համայնքի ղեկավար զգալով վտանգը զգուշացնում եմ բոլոր բնակչությանը շինարարությունը կատարելուց առաջ, կատարել բոլոր փաստաթղթային աշխատանքները հակառակ դեպքում օրենքով սահմանված կարգով կկասեցվի շինարարության աշխատանքները և տվյալ անձինք կենթարկվեն պատասխանատվության: Համայնքում բնակիչները արդեն հասկացել են որ պիտի շինարարություն անելուց առաջ համեն համապատասխան շինարարության թույլտվություն:

4. Հողօգտագործման բնագավառ

Համայնքում չկան հողօգտագործման խաղտումներ: Համայնքի հողերը հսկվում են մեր կողմից: Պահպանված են պատմամշակութային հողերը: Այս տարի հունիսի 12-ին տեղացած կարկուտից տուժեցին համայնքի գրեթե բոլոր բնակիչները և համայնքում հիմնականում բերքը վնասվեց: 2017 թվականի նոյեմբերին Կառավարությունը կարկուտից տուժածների հողի հարկերը փոխհատուցեց:

5. Տրանսպորտի բնագավառ

Կառուցապատված է համայնք մտնող գլխավոր ճանապարհը: Գրեթե ամեն տարի կատարում ենք հողալցումներ համայնքի ներսի և հանդամիջյան ճանապարհներում: Այս տարի համայնքի բյուջեով և քառամյա ծրագրով նախատեսված էր փողոցների փոսալցումներ, որը առաջին կիսամյակի ընթացքում կատարվեց և Դպրոցականների փողոցը ասփրոջովին լուսավորվեց գիշերային լուսավորությամբ:

6. 2017 թվականի բյուջե

2017 թվականի բյուջեում նախատեսված էր հետևյալ աշխատանքները.

1. Տեղական ինքնակառավարում /գյուղապետարան/ 22353.7 հազար դրամ
2. Մշակույթ միացյալ տնօրինություն 5346.4 հազար դրամ

3. Աղբահանություն 1600.0 հազար դրամ
4. Սպորտ ծառայություն 1000.0 հազար դրամ
5. Սոցիալական օգնություն 4320.0 հազար դրամ
6. Այլ մշակութային կազմակերպություն 1349.9 հազար դրամ
7. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություն 2039.9 հազար դրամ
8. Ընդհանուր բնույթի այլ ծառայություն 28.8 հազար դրամ
9. Արտաքին լուսավորություն 970.0 հազար դրամ

7. Գյուղատնտեսության բնագավառ

2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ կատարվել է ընտանի կենդանիների հաշվառում, որի արդյունքները հետևյալն են՝

8. Խոշոր եղջերավոր անասուններ 403 որից՝
 - ա/ կովեր 125
 - բ/ արտադրող ցուլեր 1
 - գ/ երինջներ 1-ից 2 տարեկան 36
 - դ/ երինջներ 2-ից բարձր 13
 - ե/ այլ սեռատարիքային 228
9. Խոզեր 199 որից՝
 - ա/ մայրեր 24
 - բ/ 4-ից 12 ամսեկան 48
10. հավեր 1612 որից ածան հավեր
 - ա/ 1328

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գյուղ տեխնիկայի ձեռքբերում
2. Ակունքի շենքի մասնակի վերանորոգում
3. Ոռոգման ցանցի վերանորոգում

Համայնքի ղեկավար՝

Մ. Բաբայան